

ՊԱՊԸ

Մեր սիրելի վարպետ Ավետիք Իսահակյանը պատմում էր, որ երիտասարդ տարիներին Թիֆլիսում Դերենիկ Դեմիրճյանին բազմիցս առաջարկել էր դնալ Ղազարապատ՝ իր ազգականների մոտ, մի քանի օր լավ ժամանակ անցկացնելու: Ազգականները նամակաների ու Լկոզների միջոցով անընդհատ նրան խնդրում էին գալ և հետևել էլ բերել՝ ում ուզենա, քանի հոգի ուզենա:

Վերջապես մի օր Դերենիկը համաձայնում է:

Հասնում են Հենիսական, ապա և Ղազարապատ դյուղը, սակայն՝ Երեկոյան, այն էլ ուշ ժամին:

Թափում են պապի դուռը, ոչ ոք չի բացում: Էլի ու էլի են թակում: Դերենիկը սկսում է մրթմրթալ, խոժոռել, թե «Ի... ինչո՞ւ եկանք, սա ի՞նչ ձեռի հրավեր է, բերում ես մի... մի... մինչև Ղազարապատ, առանց ի... ի... իմանալու տանը մարդ կա թե ոչ, հրավերդ էլ շատ կասկածելի է, երևի դու ես հո... հո... հորինել, երևի ոչ ոք մեզ չի էլ կանչել»:

Ավետիքը սկսում է մռայլվել և հուզվել:

Վերջապես դուռը բացվում է. նրանց առաջ ամբողջ հասակով մեկ կաղնու նման կանգնում է Ավետիքի այեհեր պապը: Իսահակյանը ոչնչացնող հայացքով նայում է Դերենիկին և առաջարկում ներս մտնել:

Պապը շատ ուրախանում և ամսոտսանքով հայտնում է, որ ինքը տանը մեկնակ է, տանեցիները գնացել են հանդ՝ աշխատելու: Այս բոլորը նա հայտնում է մեծ հուզմունքով և տանջանքով: Ավետիքի պապը լինում է կակաղ:

Չնայած իր մենակությանը, նա առատ սեղան է բացում
և մի լավ հյուրասիրում:

Սկսվում է գրույցը Ավետիքի և պապի միջև:

Դերենիկը տուն մտած բոպեից մնում է լուռ: Ոչ մի խոսք
չի ասում, խոսակցությանը չի մասնակցում:

Ա.՝ Են անգամ, երբ պապը սենյակից դուրս է գալիս որևէ
ուտելիք կամ աման բերելու, Ավետիքը ջղայնացած հարձակ-
վում է Դերենիկի վրա, թե «Մի խո-խո...սք էլ դու ասա,
պա... պա... պանձվել կս, ի՞նչ է»:

Երեքով մի լավ ընթրում են: Պապը փոռում է անկողին-
ները, գիշերը հանգիստ քնում են:

Առավոտյան նորից հյուրասիրություն, նորից խոսք ու
գրույց: Վերջապես շնորհակալություն են հայտնում ու դուրս
են գալիս պապոնց տնից:

Ավետիքի ջղայնությանը շափ չկա:

Հարձակվում է Դերենիկի վրա և պահանջում, ասել, թե
ինչո՞ւ ամբողջ երեկո, գիշերը և առավոտը ոչ մի խոսք չա-
սաց:

Երբ արդեն տնից բավական հեռացած են լինում, Դերե-
նիկը ասում է. «Ի... ի... ինչպես խոսեի, պա... պա... պապո
կակազ, դուն կա...կազ, ես կա... կա... կազ: Եթե... ես էլ
խոսեի, մարդը պի... պի... պիտի կարծեր, թե իրեն ձեռք
ենք առնում»:

«ԴԵ ԳՆԱ ՄԻՏՔ ՈՐՍԱ ՏԵՍՆԵՄ»

1926 թվականին կարմիր բանակի ակումբում, պրոլետ-
գրողների ասոցիացիան կազմակերպել էր դիսպուտ: Հավա-
քույթը ղեկավարում էր «Գանակը բկին» բանաստեղծության
հեղինակ Գևորգ Աբովը: Ինչպես միշտ, այս դեպքում էլ բո-
լորս հավաքվել էինք ակումբի դահլիճում և լարված ուշա-
գրությամբ լսում էինք ելույթ ունեցողներին: Խոսեցին
Ա. Վշտունին, Ն. Գաբաղյանը, Տ. Վանյանը, Ալազանը և
ուրիշներ: Նրանք խոսում էին պրոլետարական գրականու-
թյան կենսական հարցերի, ուղեկիցների, գրական նոր բար-
քերի և կարգերի մասին:

Հանկարծ Աբովը հայտարարեց, որ ձայնը տրվում է ուղեկից գրող Դերենիկ Դեմիրճյանին:

Դերենիկ Դեմիրճյանը խորիմաստ ու սարկաստիկ ժպիտով, հանգիստ ու դանդաղաշարժ, բարձրացավ բեմ:

Տիրեց քար լռություն:

Դերենիկը սկսեց խոսել պրոլետարական դրականության նպատակների, ուղեկիցների անելիքների մասին և, հանկարծ ինչ-որ շշուկ լսելով, գլուխը շրջեց դեպի կուլիսները, ապա նորից դեպի հանդիսականները և փոքր դադարից հետո սկսեց բոլորովին անկապ խոսքեր ասել, որոնք ոչ մի առնչություն չունեին ոչ միայն օրվա խնդիրների, այլև մեկը մյուսի հետ:

Նա խոսեց Բեթհովենի 9-րդ սիմֆոնիայի, Հայդնի, Մոցարտի, Շոպենի երաժշտության, աստղերի, արևի, Գալիլեյի, Միքելանջելոյի և ուրիշ հարցերի մասին:

Վ. Թոթովենցը մի քանի անգամ նրա խոսքը ընդհատեց, դահլիճում արձագանքվող իր ծիծաղով, բայց ոչ մի ազդեցություն չգործեց:

Դերենիկն իր ելույթը շէր կադողանում ավարտել: Օգնության հասավ Աբովը, հայտարարելով, որ ժամանակը վաղուց սպառվել է:

Դեմիրճյանը նախադասությունը շավարտած կանգ առավ և շնորհակալություն հայտնելով իջավ բեմից:

Բոլորս դարձացած իրար երես էինք նայում:

Ընդմիջմանը մոտեցանք Դեմիրճյանին:

Թոթովենցը, ինչպես միշտ, նախահարձակ եղավ, և սկսեց կշտամբել, ասելով՝ «Եթե ասելիք չունեիր, ինչո՞ւ բեմ ելար, բոշբողազությունդ բռնե՞ց, տեղումդ մնայիր, լավ շէ՞ր լինի»:

Դերենիկը, թե՛ «չէ, դուք ի՞նչ եք ի... ի... մանում, բ... բ... բերանս բացեցի թե չէ, տեսնեմ Աշոտ Հովհաննիսյանը աթորը վերցրեց և եկավ նստեց կուլիսների հետևը: Մտածեցի, երևի սա եկել է ն... ն... նստել, որ ինձնից միտք որսա, ես էլ մտքումս ասացի, թե գնա հիմի միտք որսա, տեսնեմ...»:

Եվ իսկապես, Դեմիրճյանը ամբողջ քսան րոպե խոսեց առանց որևէ կոնկրետ քան ասելու, անկապ ու խճողված:

Դա ապշեցուցիչ էր:

Փորձեցեք, այն էլ հանպատրաստից, խոսել առանց մըտքերի, անկապ, անտրամաբան: Դա անկարելի է: Սակայն Դեմիրճյանի համար այդ դարձավ միանգամայն հնարավոր: Միայն Դեմիրճյանի սուր միտքը, բանավեճերում ձեռք բերած մեծ փորձը և մի քիչ էլ երկյուղը կարող էին դուրս բերել նրան այդ անելանելի դրուժյունից:

Տպագրվել է «Առվեսական արվեստի» 1980-ի № 9-ում, ուրիշ կատակների հետ, «Արա Սարգսյանի գրառումներից» ընդհանուր վերնագրի տակ:

ԱՃԵՄՅԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Քսանական թվականներին, կարծեմ այդ տևեց մինչև 1932 թվականը, ընդունված կարգ էր՝ ամեն տարի դեկտեմբեր ամսին գրական տարին ամփոփել հատուկ զեկուցումով:

1929 թվականի գրական կյանքի ամփոփումը հանձնարարված էր Դերենիկ Դեմիրճյանին:

Գ. Սունդուկյանի անվան պետական թատրոնի (այժմ երաժշտական կոմեդիայի թատրոնի) դահլիճը լիքն էր հետաքրքրվող հասարակությամբ: Նախագահում էր Հայկ Գյուլիֆեխյանը:

Դերենիկ Դեմիրճյանի զեկուցումը ոչ ոքի կրակի տակ չվերցրեց (իսկ նա գիտեր այդ անել մեծ վարպետությամբ), ոչ ոքի առանձնապես չբարձրացրեց, սակայն այդ ամենի հետ զեկուցումը, ինչպես հատուկ էր Դեմիրճյանին, առատ էր սրամտություններով ու ինքնատիպ եզրակացություններով:

Դիպուտոր տևեց երկու օր:

Առաջին օրը Գյուլին (մենք բոլորս քնքշորեն այդպես էինք անվանում Հայկ Գյուլիֆեխյանին) յոթ թե ութ խոսողներից հետո ձայնը տվեց ոմն Աճեմյանի: Ամբիոնի առաջ հոխորտալով կանգնեց մի անձանոթ երիտասարդ և սկսեց իր խոսքը: Հինգ րոպե անց հասարակութունը շշնջաց, շարժվեց, աղմկեց և ի վերջո տարբեր կողմերից սկսեցին ձայնել՝ «հերիք է», «վերջացրեք», «թող հաջորդը խոսի»...

Աճեմյանը խոսքը կիսատ թողեց, ստիպված եղավ ամբիսնից իջնել, փրկելով մեզ դատարկաբանություններ լսելուց:

Երկրորդ օրը նախագահողը դարձյալ Գյուլին էր: Մի քանի հոգու խոսք տալուց հետո, հայտարարեց, որ ձայնը տրրվում է քնկ. Աճեմյանին:

Հասարակությունը, որը երեկվա կազմով նստած էր դահլիճում, բարձրաձայն հայտնեց իր դժգոհությունը: Տարրեր անկյուններից լավեցին «բավական է», «ձայն չտալ», «երեկ արդեն լսել ենք» և այլն:

Այդ աղմուկի մեջ, բեմ վազեց մազերը ճակատին թափված մի երիտասարդ, կանգնեց ամբիսնի մոտ, աջ թևը պարզեց առաջ և բարձրաձայն գոչեց. «Ընկերներ, ես երեկվա Աճեմյանը չեմ»:

Դահլիճում նստած հասարակությունը, տեսնելով, որ իսկապես այս մեկը երեկվա Աճեմյանը չէ, լռեց: Սակայն այս երկրորդ Աճեմյանը նույնպես խոսեց անիմաստ ու անկապ: Ներկաները մի կերպ համբերեցին մինչև այս նոր Աճեմյանը սպառեց իրեն տրված տասը րոպեն:

Երկու Աճեմյաններն էլ մեր շրջապատին բոլորովին անձանոթ էին և ոչ մի հատկանիշով նման չէին ոչ Վարդան և ոչ էլ Գուրգեն* Աճեմյաններին:

Երբ ելույթ ունեցողների ցուցակը սպառվեց, նախագահը պատասխանի խոսքը տվեց Դերենիկ Դեմիրճյանին:

Դեմիրճյանը, զինված իրեն հատուկ սրամտությամբ և փոքր-ինչ կակազելով, սկսեց «ե... ե... ես կսկսեմ իմ հակառակորդներին պատասխանել հե... հե... հետևից, այսինքրն՝ վերջին խոսողից, այսինքրն՝ վերջից դեպի ա... ա... առաջ»:

Մի երկու վերջին խոսողներին պատասխանելուց հետո շարունակեց իր խոսքը այսպես. «Գալով ա... ա... Աճեմյաններին, պիտի ա... ա... ասեմ, որ ճիշտ է, վ... վ... վերջին Ա... ա... Աճեմյանը նման չէր առաջին Ա... Աճեմյանին, բայց ա... ա... առաջին Աճեմյանը շատ էր նման վերջին Ա... ա... Աճեմյանին»:

* Խոսքը Գուրգեն Մահարու մասին է:

Դասչիճում քարձրացա՛վ մի հուժկու, աղմկալի ու լիա-
թոր ծիծաղ: Դերենիկ Դեմիրճյանը երկու Աճեմյաններին պա-
տասխանեց միանգամից իր սպանիչ հումորով:

ՕՆՆԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ՄԱՀԸ

Վաստակավոր արտիստ Օննիկ Ստեփանյանը երկար
տարիներ աշխատել էր Թիֆլիսի և Անդրկովկասի այլ քա-
ղաքների թատրոններում: Իր կյանքի վերջին տարիներին նա
փոխադրվեց Երևան և վերջնականապես կապվեց Գ. Սուն-
դուկյանի անվան պետական դրամատիկական թատրոնի հետ:
Սակայն տարիներն իրենց քայքայիչ դործն արդեն կատարել
էին: Օ. Ստեփանյանի ուժերը գնալով սպառվում էին, նա
հաճախ հիվանդանում էր և ընկնում անկողին:

Օ. Ստեփանյանը մենակյաց էր:

Մենք նրան հանդիպում էինք թատրոնում՝ ներկայացում-
ների ժամանակ, իսկ օրվա ընթացքում՝ կաֆեում կամ ճա-
շարանում: Նրա մոտիկ բնկերն ու միակ խնամողը դերասան
Արամայիսն էր: Կյանքի անողոր հարվածների տակ Արա-
մայիսի մեջ ինչ-որ բան խախտվել էր ու հանել նրան հոգե-
կան նորմալ կացությունից: Նա մեծ ճիգ էր գործադրում
գա թաքցնելու համար, սակայն շարժումներից, հայացքից,
խոսակցության անտրամաբանական շարադրանքից խոսակի-
ցը գլխի էր ընկնում, որ Արամայիսի մոտ ինչ-որ բան տեղը
չէ:

Օ. Ստեփանյանը միշտ նրա հետ էր լինում, թատրոնում
թե փողոցում, ճաշարանում թե տանը, ամենուր: Արամա-
յիսը շատ հաճախ ապրում էր Ստեփանյանի սենյակում:

Լսել էինք, որ Օ. Ստեփանյանի առողջական վիճակը գնա-
լով վատանում է, ծանրանում:

Ահա, այդ օրերին Գ. Սունդուկյանի անվան թատրոնում
տեղի էր ունենում Քեղաշխի համադումարը: Նախագահու-
թյան անդամները հերթով ղեկավարում էին նիստերը: Այդ
օրը հերթը հասել էր Տիգրան Շամիրխանյանին:

Թատրոնի բեմը շատ փոքր էր, նախաբեմը՝ շափաղանց
նեղ: Երբ բեմի վարագույրը փակվում էր, վարագույրի առաջ

նախաբեմի վրա հագիվ էր մնում շարժվելու տեղ: Նախա-
գահության անդամները նստած էին այնպես, որ նրանց
թիկունքները խրվում էին վարագույրի մեջ և վերջինիս ներ-
քևի մասը գնում էր ետ, դեպի խորքը:

Տ. Շամիրխանյանը նստած էր ճիշտ մեջտեղում. երկու
վարագույրների միացման կետում, և իրեն հատուկ արհես-
տական խստությամբ ու լրջությամբ վարում էր նիստը:

Իրսում, զբոսասրահում, Շամիրխանյանի մանկության
մտերիմ ընկեր դերասան Դավիթ Գուլազյանը ինչ-որ կար-
գադրություններ էր անում:

Հանկարծ նա լսում է խուլ հեկեկոց: Խոսակցությունը
թողնում է ու գնում հեկեկոցի կողմը:

Աստիճաններից լացուկոծով բարձրանում է Արամայիսը:

Դավիթը, տեսնելով նրա կարեկցանքի կարոտ վիճակը,
մոտենում է, դդուշությամբ բռնում է թևը և հարցնում.

— Արամայիս ջան, ի՞նչ է պատահել, ի՞նչ կա, ինչի՞
ես լաց չինում:

Արամայիսը, թե՛

— Դավիթ ջան, Օննիկը մեռավ:

— Ո՞նց թե, տո, գժվե՞լ իս, էտենց միանգամի՞ց, դո՞րդ
ես ասում.

— Հա, հա, Օննիկս մեռավ:

— Ցա.— ասում ու սաստիկ հուզված վազում է դեպի
քեմ:

Վարագույրի հետևից, աննշմարելի, մոտենալով Տ. Շա-
միրխանյանին, կանչում է դողդոջուն ձայնով.

— Տիկո, Տիկո:

Շամիրխանյանը, լսելով Դավիթի ձայնը, գլուխը թեքում
է դեպի վարագույրի արանքը և հարցնում:

— Հա, ի՞նչ կա:

— Տիկո, Օննիկը մեռել է...

— Ո՞ր Օննիկը, տո...

— Մեր Օննիկը, Ստեփանյանը:

— Ո՞նց թե, ճի՞շտ ես ասում:

— Հա, հա, ճիշտ է, ճիշտ, հիմա Արամայիսը լաց չինե-
լով հկավ ու ասաց...

Տ. Շամիրխանյանը այդ անսպասելի գույժից հուզված, ամբիոնի առաջ կանգնած հերթական հռետորից ներողություն է խնդրում, մոայլված ու տխուր դիմելով պատգամավորներին՝ ասում է.

— Հարգելի ընկերներ, նոր հայտնեցին, որ մեր թատրոնի հին մշակներից վաստակավոր դերասան Յեննիկ Ստեփանյանը վախճանվել է, խնդրում եմ նրա հիշատակը հարգել հոտնկայս:

Մենք բոլորս, հանկարծակիի եկած այդ տխուր լուրից, բարձրացանք մեր տեղերից, դահլիճով մեկ լցնելով ծալվող աթոռների աղմուկը: Կարճատև, բայց խորհրդավոր լուսթյունից հետո, Շամիրխանյանի խնդրանք դարձյալ նստեցինք մեր տեղերը: Ժողովը շարունակեց իր ընթացքը: Հռետորը նորից սկսեց ճառել, ամեն ինչ ստացավ իր նախկին վիճակը:

Հարգանքի բոպեններին, վարագույրի փակում, մթության մեջ, խորին ակնածանքով կանգնած է լինում նաև Գուլազյանը, հատուցելու համար իր վերջին պարտքը բեմի վաղեմի ընկերոջ հանդեպ: Երբ արդեն դահլիճում կյանքը սկսում է իր հունով ընթանալ, Դավիթը սթափվում է և առաջին հերթին ուզում է Արամայիսից իմանալ Ստեփանյանի մահվան մանրամասնությունները: Զբոսասրահում մոտենում է նրան ու հարցնում.

— Տո, մի պատմի, ո՞նց եղավ:

— Դավիթ ջան, ո՞նց ասեմ: Իրար հետ խոսում էինք, մեկ էլ տեսնեմ Յեննիկը շուռ եկավ դեպի պատը ու քնեց:

— Յա, ո՞նց թե քնեց, Քնե՞ց թե մեռավ...

— Ի՞նչ իմանամ, էլ չխոսեց. ես էլ դուրս եկա, որ գամ ձեզ ասեմ:

— Այ հերորհնած, բալքի մարդը շուռ է եկել ու քնել:

— Հա, էտ էլ կարող է...

— Յա՛, Արամայիս, գիժ հո շե՞ս...

— Հա, Դավիթ ջան, գիժ շեմ, բա ի՞նչ եմ...

Այստեղ Գուլազյանը սփրթնում է, մի ահավոր սարսուռ է անցնում ամբողջ մարմնով մեկ: Ի՞նչ անի: Արամայիսին հավատաց, գնաց Տիգրանին հայտնեց: Նա էլ, անհամբեր մարդ, առանց ստուգելու, անմիջապես աշխարհով մեկ հայ-

տարարեց խեղճ Օննիկի շկայացած մահը: Ի՞նչ խայտառակութիւն... գուցե մարդը հիմա քնած է կամ քնից արթնացել է ու նստած է անկողնում...

— Վայ մե, էս ինչ փորձանք եկավ գլխիս: Վայ գետինը շմտնիս, Արամայիս, ի՞նչ անեմ հիմա: Ի՞նչ պիտի անեմ, ճարս ի՞նչ է, գնամ նորից Տիկոյի մոտ, — մտածում է Դավիթը և վազում դեպի բեմի խորքը ու վարագույրի հետեից, հագիվ լսելի ձայնով՝

— Տիկո, Տիկո:

— Հա, էլի ի՞նչ է, զահլաս տարար, ի՞նչ ես ուզում, անվերջ Տիկո հա Տիկո:

— Տիկո ջան, մի ջղայնանա, կարծեմ Օննիկը չի մեռել...

— Ո՞նց թե չի մեռել...

— Ասում եմ՝ կարծեմ Օննիկը չի մեռել:

— Յա՞, հո գիժ չես:

— Հա, էն գիժ Արամայիսը ասաց, ես էլ հիմարս հավատացի: Հետը խոսեցի, հարց ու փորձ արի, հիմի էլ ասում է, թե անկողնում շուռ եկավ դեպի պատը ու քնեց:

Տիգրան Եամիրխանյանը պաշտոնական շորութեամբ, խիստ տոնով ասում է.

— Ես շգիտեմ, մեռել է, թե չի մեռել, ես արդեն հայտարարել եմ, իմ գործս չէ, եթե չի մեռել, գնացեք ասեք, թող մեռնի:

ՄՈՐՈՒՔԸ ԵՎ ՎԵՐՄԱԿԸ

Բարեբախտաբար ես Երևան հասա այն տարիներին, երբ առույգ, զվարթ ու եռանդով լի ասրում և աշխատում էին ավագ սերնդին պատկանող պատկառելի և հարազատ դեմքեր, անվանի գործիչներ, որոնք իրենց ներկայութեամբ պարզարում էին մեր հասարակութիւնը:

Նրանց թվում էին մեր մշակութիւն ազնիվ ծառայութիւններ մատուցած Ստեփան Քանայանն ու էմին Տիր-Գրիգորյանը:

Նրանք երկուսով միշտ միասին էին. սրճարանում թե

տանը, փողոցում թե բուլվարում, թատրոնում թե հյուրա-
սիրություններում, ամեն տեղ:

Նրանք երկուսով էլ, խորը ծերության մեջ, ապրում էին
իրենց հետադարձ մանկությունը...

Մի գիշեր, սովորականի նման Քանայանն ու Տեր-
Գրիգորյանը իրար բարի գիշեր մաղթելուց հետո, բաժան-
վում են իրարից: Քանայանը մենակ տուն է վերադառնում:
Ճանապարհին, խորհելիս, ուղեղում մի միտք է ծագում և
ինքն իրեն մի քանի անգամ հարց է տալիս, թե ինչո՞ւ տա-
րիներ շարունակ այդ մասին գլխի շի ընկել և շի հարցրել
էմինին: Ինքն իրեն խոսում է և ծիծաղում: Հասնում է տուն,
սակայն ներս չի մտնում: Որոշում է վերադառնալ, գնալ
էմինի մոտ և անպայման հարցնել:

էմին Տեր-Գրիգորյանը անկողնում պառկած է լինում,
երբ Քանայանը ուրախ ձայնով կանչում է.

— էմին, էմին, ես եմ, բաց արա:

էմինն այդ անսովոր այցելությունից վախեցած, վեր է
թոնում, բացում է դուռ.

— Հը, հեր օրհնած, ի՞նչ է պատահել, շինի դժբախտ...
Քանայանը հանգիստ տոնով ու ծիծաղով.

— Չէ, ոչինչ չի պատահել, մի անհանգստանա: Տուն
վերադառնալիս մտածում էի, թե էդ ո՞նց եղավ, որ էսքան
տարիներ մենք միշտ միասին ենք ու մի բան քեզ չեմ հարց-
րել: էմին ջան, հարցս էս է. դու, որ գիշերը պառկում ես,
էդ երկար ու ձիգ մորուքս վերմակի տա՞կ ես դնում, թե
վերմակի վրեն:

էմինը շփոթվում է:

— Յա, էդ մասին իսկի չեմ էլ մտածել: Ծիշտն ասած,
չեմ էլ իմանում՝ տակն եմ դնում, թե վրեն:

— Հա՛, էդ էի ուզում իմանալ էլի...

Քանայանը խորամանկ ժպիտով թողնում է ու հեռանում:

էմինը լույսը հանգցնում է և կրկին մտնում անկողին:
Սկսվում են նրա դժոխային տանջանքները: Մորուքը դնում
է վերմակի տակ, չի լինում, անհանգստացնում է: Փոխադ-
րում է վերմակի վրա, ավելի վատ է, խեղճն ամբողջ գիշե-
րը տառապում է: Մորուքը մեկ տանում է վերմակի տակ,

Տեկ դնում վերձակի վրա, կեսը տակը, կեսը վրան, ոչ մի կերպ չի դասավորվում և չի հաջողվում քնել:

Մինչև առավոտ պայքարում է մորուքի հետ և անց է կացնում մի տառապալի գիշեր: Քանայանը այդ մի հարցով վերջ է դնում էմինի հանգստությանը:

Հետևյալ օրը, առավոտյան, որոշյալ ժամին, ըստ սովորության, հանդիպում են իրար: Մեկը ուրախ ու զվարթ, մյուսը մռայլ տրամադրությամբ, հոգնած, աչքերը կարմրած:

— Հը, ի՞նչ է պատահել, ինչո՞ւ ես թթված, վերջը գտա՞ր, վերձակիդ տակն ես դնում, թե վրեն:

— Այ անաստված, դու խիղճ չունես: Կյանքումս չէի էլ մտածել մորուքիս գոյության մասին և ամեն օր հանգիստ քնում էի: Չար սատանա, որտեղի՞ց միտդ եկավ այդ հարցը: Ողջ գիշերը շեմ քնել: Խանգարեցիր իմ անդորրը, էլ սրանից հետո դժվար թե մորուքիս պատճառով քունս տեղը լինի: Կյանքս խորտակեցիր, մորուքիս ձեռը կրակն ընկա, անխիղճ:

ՉԻՆ

Դիրիժոր Յաղուբյանը ինքնատիպ և հետաքրքիր անձնավորութուն էր: Աշխատանքից դուրս նրան միշտ կարելի էր հանդիպել ճաշարանում, նախաճաշելիս, ճաշելիս կամ ընթրելիս: Նա մենակ էր: Կինն ու աղջիկը մնացել էին Փարիզում և ոչ մի կերպ չէր հաջողվում նրանց բերել Երևան:

Յաղուբյանը մեր քաղաքի նուրբ ճաշակի տեր, լավագույն դեզուստաստորն էր, սիրում էր լավ ու համեղ ճաշեր ուտել, մանավանդ խմել հայոց աշխարհի արևահամ գինին: Ճաշի ժամանակ նա միշտ մի քանի շիշ տարբեր տեսակի գինիներ էր պատվիրում: Առաջին պնակի հետ խմում էր մի տեսակը, այն էլ մի բաժակ միայն, և շշի մեջ թողնում մնացածը: Երկրորդ պնակի հետ մի այլ տեսակից, դարձյալ մի բաժակ: Դեռերտի հետ երրորդը և այլն: Ճաշարանի մատուցողները սիրում էին նրան և ուրախությամբ սպասարկում, ոչ այնքան որպես Յաղուբյանի, որքան՝ լավ հաճախորդի, որ ամեն

Ճաշին և ընթրիքին թողնում էր մի քանի շիշ գինիներ, այն էլ պրեթե լիքը:

Իսկ հավը, օ՛, հավը: Հավը ուտելիս նա կարծես առաջ-
նակարգ վիրաբույժ լիներ: Պատառաքաղով և դանակով այն-
պես էր մաքրում հավը և թողնում մերկ ոսկորները, որ մենք
միշտ դարմանքով ու հիացմունքով նայում էինք նրան և
գովասանական խոսքեր ասում նրա բացառիկ վարպետության
մասին: Մի միլիգրամ անգամ միս ոսկորների վրա չէր թող-
նում:

Մենք բոլորս նրան, ի նշան հարգանքի, մաեստրո էինք
կոչում:

Մի օր լենինականում, գասարույների ժամանակ, ճաշա-
րանում նստած, շրջապատված դերասաններով ու երաժիշտ-
ներով, Յաղուբյանն ընթրում էր: Նրանց մեջ էր նաև մեզ
ծանոթ պրոզաներից մեկը՝ Ա. Ա.-ն:

Դերասան Գ. Ա.-ն, ինչ-որ ձիու մասին երկար ու բարակ,
տաղտկալի մի պատմություն էր անում: Յաղուբյանը լսում
էր և առանց դադարի մաքրում պնակները, իր սիրած գինի-
ները խմում: Գրողը, որ լարված հետևում էր դերասանի
պատմածին, սրամտելու ցանկությամբ դիմում է Յաղուբյա-
նին և ասում.

— Մաեստրո, ձիու մասին կխոսի և միշտ ձեր երեսը
կնայի, — ու քթի տակ ծիծաղելով աչք է ածում իր շրջա-
պատին և կորդում ներկաների քրքիջը:

Յաղուբյանը իրեն շկորցրեց, անձեռոցիկով սրբեց շրթ-
թունքները, նրանց վրա թառած աչ ու ձախ ծավալված սև
բեղերը, և ասաց.

— Ինչո՞ւ կանհանգստանաս, տղաս, մի շտապիր, քիչ
հետո նա իշու մասին պիտի խոսի և քո երեսիդ նայի:

Տպագրվել է «Սովետական արվեստի» 1980-ի № 9-ում,
ուրիշ կտակների հետ, «Արա Մարգարյանի գրառում-
ներից» ընդհանուր վերնագրի տակ:

Դիրիժոր Յաղուբջանը ճաղատ էր: Նրա գլխի կառուցվածքը յուրահատուկ ձև ուներ. եթե գանդի պրոֆիլի ուրվագիծը նկարելու լինեինք, ապա կստացվեր հետևյալը: Ճակատը ցցված էր դեպի առաջ, գագաթում գիծը իջնում էր, կազմելով բավականին զգալի մի փոս. գանդի հետևի մասում գիծը էլի բարձրանում էր, ցցվում և ապա ուղղահայաց սահում ու իջնում դեպի ծոծրակը: Մենք բոլորս դա ամեն օր նկատում էինք, բայց երբեք չէինք ակնարկում, մանավանդ որ Յաղուբջանը խիստ դայրանում էր, երբ այդ մասին խոսք էր լինում:

Մեզ ծանոթ գրողը, որ մի անգամ ձիու պատմության կապակցությամբ ստացել էր արժանին, Յաղուբջանի գանդի այդ թերությունը վաղուց նկատել էր և ամեն կերպ առիթ էր փնտրում բացելու այդ «գաղտնիքը» և մանավանդ, վառված առաջին հարվածից, լուծելու իր «վրեժը»:

Դարձյալ լենինականում, դարձյալ ճաշարանում, դարձյալ շրջապատված երաժիշտներով ու դերասաններով, խոսք ու գրույցի ժամանակ մեր գրողը ընդհատում է խոսողներին, տեղից բարձրանում է, մոտենում Յաղուբջանին, ընդհանուր լուսնյան մեջ զննում է գանգը ու կեղծ խորամանկությամբ և միամտությամբ, իբր նոր է նկատում, հարցնում է.

— Մաեստրո, էդ ինչո՞ւ ձեր գանգը էդպես տափակ է...

Մաեստրոն, որը միշտ սուր խոսքը պատրաստ ուներ, պատասխանում է.

— Տափակել է, տղաս, տափակել, այո, որովհետև վերջերս սկսել եմ քո ոտանափորները կարդալ:

ՉՈՐՍ ՇՈՒՆ

Մաեստրո վարդան Բունին իր ընտանիքով ապրում էր Սպանդարյան փողոցի միհարկանի տան մեջ: Մայթով անցնելիս նրա բնակարանի պատուհաններից կարելի էր տեսնել սենյակի ներսում կատարվող անցուդարձը:

Վարդան Բունին սիրում էր շնիկներ պահել:

Նա ուներ երեք սպիտակ շպից տեսակի սիրուն փոքրիկ շնիկներ: Օրվա ընթացքում մի քանի անգամ նրանց դուրս էր բերում և ման ածում: Այդ բավական դավեշտական պատկերը, այն էլ օրը երեք անգամ, այնքան էր աչքի ընկնում, որ շատերը կատակով խոսում էին այն մասին, որ մատուրոն ոչ թե երաժիշտ է, այլ հմուտ շնապահ: Իսկ Վարդան Բունին, կարևորություն շտալով այդ կարգի բամբասանքներին, տարին 365 օր և տարիներ շարունակ, առանց ռեժիմը խախտելու, դուրս էր բերում իր սիրած սպիտակ շնիկներին զբոսանքի:

Եվ ահա, վրա հասավ այսպես կոչված «ապարատի զրտումը»:

1931 թվականին կազմակերպվեցին հատուկ հանձնաժողովներ, որոնք կոլեկտիվների և լայն մասսաների ներկայությամբ և նրանց ակտիվ մասնակցությամբ քննում էին որոշ մարդկանց կենսագրությունն ու գործունեությունը և քննում համապատասխան որոշումներ:

Հերթը հասել էր արվեստի աշխատողներին:

Հայֆիլհարմոնիայի փոքր դահլիճում, որն այն ժամանակ Երևանի ամենամեծ դահլիճն էր, հավաքվել էին շատ-շատերը և դիտում էին ապարատի զտման տարօրինակ պրոցեսը: Դահլիճը լեփ-լեցուն էր: Այնտեղ էին դերասաններ, երաժիշտներ, գրողներ, արվեսագետներ և կողմնակի շատ մարդիկ, այնտեղ էինք նաև մենք, մի խումբ մտիկ ընկերներ:

Նախագահը մեզ բոլորիս ծանոթ, հայտնի զինվորական, հին կուսակցական Վարդանովն էր: Նա կարճահասակ էր, լայնաթիկունք, սև և երկար սրածայր բեղերով, աշխույժ ու խստապահանջ: Բեմ հրավիրեց Վարդան Բունիին:

Մատուրոն համառոտակի պատմեց իր կենսագրությունը, խոսեց իր երաժշտական ստեղծագործությունների և գործունեության մասին ու գնաց նստեց նախագահության սեղանից մի փոքր հեռու, քեմոսը դրված հատուկ աթոռի վրա:

Նախագահը, դիմելով ներկաներին, ասաց «Կենսագրական հարցեր կա՞ն»:

Հայֆիլհարմոնիայի մի քանի աշխատակիցներ, որոնք միաժամանակ Բունիի ընկերներն էին, դահլիճի մի ծայրին կողք-կողքի նստած, անվերջ փսփսոււմ ու ինչ-որ «դավադրություն» էին պատրաստում:

Նախագահը երկրորդ անգամ դիմեց հասարակությանը: «Դավադիրներից», Ֆիլհարմոնիայի ադմինիստրատոր Հայկը, ձեռքը բարձրացրեց ու քմծիծաղով ասաց. «Խնդրում եմ, թող ընկեր Բունին հայտնի մեզ, թե քանի հոգուց է բաղկացած իր ընտանիքը»:

Ներկա գտնվողներից շատերը, որոնք ծանոթ էին Վարդան Բունիի շնապահությանը, սկսեցին չիաթոք ծիծաղել: Դահլիճը վարակվեց և տիրեց մի անասելի ուրախ ու բարձրագոչ ծիծաղ:

Բունին շատ սրամիտ էր, արագորեն կողմնորոշվող, իրեն երբեք չէր կորցնում ու իր հակառակորդների համար պատասխանը միշտ լեզվի ծայրին էր:

Նա համբերությամբ սպասեց մինչև դահլիճի հանդարտվելը:

Վարդանովը դիմելով Բունիին ասաց. «Խնդրեմ, պատասխանեցեք»:

Յուրաքանչյուր խոսքը մուրճի հարվածների նման մեխին իջեցնելով, Վարդան Բունին ասաց. «Ընտանիքս ունի հետևյալ կազմը. ես եմ, կինս է և Հայկի հետ միասին չորս շուն»:

ԱՁԻՄՁԱԴԵ

1927-ին դնացել էի Բաքու:

Լսել էի, որ Բաքվում ապրում և ստեղծագործում է Ադրբեջանի հայտնի նկարիչ Ազիմզադեն: Որոշեցի, քանի առիթը եկել է, այցելեմ նրան, ծանոթանամ, տեսնեմ նրա գործերը և նրա միջոցով ծանոթանամ Բաքվում ապրող այլ նկարիչների հետ: Սակայն, ինչպե՞ս նրան գտնել, երբ ոչ մի ծանոթ քաղաքում չունեի: Որոշեցի փնտրել հասցեն հեռախոսագրքում: Այնտեղ դատա չորս ազիմզադեներ: Ոչ մեկի անվան դեմ չէր գրված, անշուշտ, նրանց մասնագիտությունը:

Որոշեցի շորսի էլ հասցեները վերցնել և հերթով աչցելել՝
Դրանցից մեկն ու մեկը, ի վերջո, իմ փնտրածը կլինի:

Առաջին հասցեով էլ ուղևորվեցի:

Դա մի երկհարկանի հին տուն էր, մռայլ արտաքինով,
վարադուլրներով ծածկված, փոքր և նեղ շուամուտներով:
Պատշգամբը, որ դուրս էր ցցված ճակատից, դարձարված
էր փայտյա սյուներով և սյուները միացնող տախտակյա կա-
մարներով, փորագրություններով:

Փողոցի դռնից ուղղակի սկսվում էր նեղ, երկար մի աս-
տիճան, որը տանում էր ուղիղ մինչև երկրորդ հարկը: Բարձ-
րացա վեր, երկրորդ հարկի դուռը նույնպես բաց էր:

Թափում եմ՝ պատասխան չկա:

Մտա ներս: Անցա փոքր սենյակից երկրորդը, դարձյալ
մարդ չկա:

Սենյակի պատերին կախված էին գորգեր, մեջտեղը դրված
էր ցածր մի սեղան: Պատերի երկայնքով ձգված էին սեղիր-
ներ՝ գույնդգույն բարձերով զարդարված:

Սենյակի կահ-կարասին, մանավանդ սեղիրները և բար-
ձերը, ինձ հիշեցրին Պոլսո թրքական տները, ուր ես հաճախ
լինում էի, երբ ինձ հրավիրում էին գեղարվեստի ուսում-
նարանի իմ թուրք դասընկերները:

Սա ծանոթ էի այդ միջավայրին:

Սպասեցի, հույս ունենալով, որ ի վերջո մեկն ու մեկը
երևալու է: Որոշ ժամանակ անց իսկապես որ կողքի դուռը
բացվեց և ներս մտավ սպիտակահեր, սակայն բարեկազմ և
դեղնցիկ մի կին ու հարցրեց.

— Երևի դուք Ազիմը աղի՞ ին էք ուզում:

— Այո, — պատասխանեցի իմ թրքերենով:

— Նա այսօր ուշացավ, սակայն շուտով կգա: Նստե-
ցեք: — Ասաց ու հեռացավ:

Քիչ անց, ներս մտավ մի այլ կին, ավելի երիտասարդ և
ավելի գեղեցիկ, քիչ ավելի դեր, քան առաջինը, մոտ քա-
ռասուն տարեկան: Ժպիտը դեմքին՝ բարևեց, նայեց ինձ,
սեղանի վրայից ինչ-որ մի բան վերցրեց ու կողքի դռնից
անհետացավ:

Ես շփոթվեցի: Միրտա կասկած ընկավ: Չլինի մի այլ տեղ
եմ ընկել...

Լոռիցյան մեջ սպասում էի:

Ապա բացվեց ձախակողմյան երրորդ դուռը և ներս մտավ մի սևաչյա գեղեցկուհի՝ մազերը ուսերի վրա թափված, կուրծքը կիսաբաց, թևերը հոլանի, կոնքը հասուն և ազդրերը ամուր ու փարթամ:

Բարևեց, ժպտաց, սեթևեթեց և նույն դոնից անհետացավ, ինչ երկրորդ գեղեցկուհին:

Այս անգամ մարմնովս դող անցավ, սարսուռ երիտասարդական ավյունի և միաժամանակ վախի:

Արդեն սկսեցի լուրջ անհանգստանալ. մտածեցի, երևի ես ընկել եմ մի այնպիսի տուն, ինչպիսիք Եվրոպայում ես հանդիպել եմ ժամանակին և այցելել: Բայց 1927 թվականին, սովետական իշխանության պայմաններում ... դա ինձ համար անըմբռնելի էր:

Այս մտքերով տարված էի, երբ սենյակ մտավ առաջին տարեց . կինը, մոտեցավ ինձ, ծիախտ առաջարկեց և ժպտը դեմքին հարցրեց.

— Ձեզ դուր եկա՞ն այդ երիտասարդ կանայք:

— Այո, իհարկե, նրանք շատ գեղեցիկ էին, — պատասխանեցի ես:

— Դուք գիտե՞ք, որ նրանց տարիքին էլի երկուսը կան մեր տանը նույնպես սիրուն ու երիտասարդ:

— Նրանք ձեր աղջիկներն են...

— Ոչ, ոչ: Նրանք իմ ամուսնու հարեմի կանայք են:

— Ինչպե՞ս...

— Այո, Ազիմզադեի հարեմի կանայք են. ես նրա մեծ կինն եմ, արդեն պառափել եմ և հսկում եմ սրանց ու խնամում: Դուք համարձակ մարդ եք երևում: Ոչ ոք այստեղ մտնելու իրավունք չունի: Ինչպե՞ս եղավ, որ ներս մտար:

— Ներեցեք, սա ուսամ Ազիմզադեի տունը չէ՞:

— Ոչ, ինչ ուսամ, սա կոշկակար Ազիմզադեի տունն է...

— Ինչ եք ասում:

Մտքովս իսկույն անցավ, որ եթե կոշկակարը այս բոլորին ներս մտնի և ինձ այստեղ գտնի, կարող է մեծ փորձանք պատահել:

— Բայց, ինչպե՞ս այդ կանայք համարձակվեցին ներս գալ ու ինձ զննել:

— Ես նրանց ասացի, որ երիտասարդ, սևաչլա, մի համարձակ երիտասարդ ներս է եկել և սպասում է Ազիմզադեին: Նրանք էլ իրար խառնվեցին:

Ես վեր կացա, հազար ներողութուն խնդրեցի մեծ տիկնոջից և, շունչս պահած, աստիճաններից գլորվեցի ներքև: Լավ էր, որ հարեմի տիրոջը չհանդիպեցի:

Մնացած երեք ազիմզադեիների մասին այլևս մտածել անգամ չէր կարելի:

1927 թ.

Տպագրվել է «Սովետական արվեստի» 1980-ի № 9-ում, ուրիշ կառակների հետ, «Արա Սարգսյանի գրառումներից» ընդհանուր վերջագրի տակ: